

ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴԻ ԼՈՒՅՍԸ ՁԵՐ ՍՈՒԹ ՕՐԵՐԻՆ

«Ես աշխարհ եկա որպես լույս, որպեսզի ով որ ինձ հավատա, խավարում չմնա:» Հովհաննես 12:46

Ա. Յուրաքանչյուր մարդ ունի իր մութ օրերը

➤ Հուսախափվածության մութ օրերը

«Երբոր ես բարիքի էի սպասում, և չարիք եկավ, և ակնկալում էի լույսի, և եկավ խավար:» Հոբ 30:26

➤ Վշտահարության մութ օրերը

«Հեռու ես իմ փրկությունիցը և իմ հառաչանքի խոսքերիցը:» Սաղմոս 22:1

➤ Կասկածի մութ օրերը

«Ով քայլում է խավարի մեջ, չի իմանում, թե ո՛ր է գնում:» Հովհաննես 12:35

➤ Ճնշվածության մութ օրերը

«Հիշիր իմ տառապանքը... դառնությունը: Լավ հիշում է իմ հոգին և խոնարհվում է ինձանում:» Երեմիայի Ողբ 3:19-20
«Դու հեռացրիր ինձանից բարեկամիս և մոտավորիս. Իմ ճանաչները խավարի մեջ են:» Սաղմոս 88:18

Մութ օրերի հակաթույնը:

«Դու ես իմ ճրագը, ով Տեր. Եվ Տերը լուսավորելու է իմ խավարը:» Բ Թագավորաց 22:29

Բ. Ինչպե՞ս կարող է Հիսուսը փարատել իմ մութը

1. Նա կարող է քաջալերել ինձ, երբ հուսախափված եմ

«Տերը մոտիկ է սրտով կոտրվածներին, և փրկում է հոգով փշրվածներին:» Սաղմոս 34:18

«Ես գիտեմ այն խորհուրդները, որ ես խորհում եմ ձեր մասին, ասում է Տերը, խաղաղության խորհուրդները և ոչ թե չարության, որ ձեզ տամ ապագան և հույսը:» Երեմիա 29:11

2. Նա կարող է զորացնել ինձ, երբ վշտահար եմ

«Ամեն բան կարող եմ ինձ զորացնող Քրիստոսով:» Փիլիպպեցիս 4:13

«Թեև գնամ մահի շուրթի ձորումը՝ չար բանից չեմ վախենալ. Որովհետև դու ինձ հետ ես:» Սաղմոս 23:4

3. Նա կարող է առաջնորդել ինձ, երբ կասկածների մեջ եմ

«Հիսուս ասաց. Ես եմ աշխարհի լույսը: Ով որ ինձ հետեւի, խավարի մեջ չի քայլի, այլ կունենա այն լույսը, որ առաջնորդում է դեպի կյանք:» Հովհաննես 8:12

«Քո խոսքը ճրագ է իմ ոտների համար, և լույս իմ ճանապարհի համար:» Սաղմոս 119:105

4. Նա կարող է փոխել ինձ, երբ որ ճնշված եմ

«Բայց այդ բոլոր ծածուկ արարքները Քրիստոսի լույսով հայտնվում և հանդիմանվում են:» Եփեսացիս 5:13

«Լույսի պտուղներն են բարությունը, արդարությունը և ճշմարտությունը:» Եփեսացիս 5:9

«... որի ճշմարիտ լինելը տեսանք Քրիստոսի և ձեր կյանքի մեջ, թե ահա խավարն անցնում է, և արդեն իսկ երևում է ճշմարիտ լույսը:» Ա Հովհաննես 2:8

Հաջորդ Քարոզի Թեման
ԾՆՈՒՆԴԸ ՎԱՐԱԳՈՒՅՐԻ ԵՏԵՎՈՒՄ
Հովիվ Սարո Խաչիկեան